

«Վէմ»-ի ղեկավար սկզբունքն
է լինելու գիտական
առարկայականությունն
ու ճշմարտությունը,
միայն ճշմարտությունը,
ամբողջ ճշմարտությունը՝
համոզած, որ անգամ ամենադառն
ճշմարտությունը առելի օգտակար է,
քան ոսկեզօծ ու շաքարապատ
սուտը»:

Միմոն Վրացեան

Խմբագիր՝ ԳեՎորգ ԽՈՒԴԻՆՅԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆ

Վլադիմիր Բարխուդարյան
Սերգեյ Սարինյան
Աշոտ Մելքոնյան
Ռուբեն Մաֆրաստյան
Ալբերտ Ստեփանյան
Սուրեն Դանիելյան
Համլետ Պետրոսյան
Սամվել Մուրադյան
Լևոն Մկրտչյան

ՍՓՅՈՒՌՔ

Երվանդ Փամբուկյան – Լիբանան
Մկրտիչ Մկրտչյան – Լիբանան
Հարություն Քյուրքչյան – Հունաստան
Կարո Արմենյան – ԱՄՆ
Ռուբինա Փիրումյան – ԱՄՆ
Վաչե Բրուտյան – ԱՄՆ

հ ա մ ա հ ա յ կ ա կ ան հ ա ն դ ւ ե ս
Ը (ԺԴ) տարի, 2016,
թիվ 4 (56), հոկտեմբեր-դեկտեմբեր

«Վէմ» համահայկական հանդես
Հրատարակիչ՝ «Վէմ հանդես» ՍՊԸ

0010 Երևան, Մհեր Մկրտչյան փ. 12/1
հեռախոս՝ 52 18 76, 093 83 93 24

Էլ. փոստ՝ khoudinyan@yahoo.com

Ինտերնետային կայք՝
vemjournal.org

ISSN 1829 – 1864

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՄՔԱԳՐԱԿԱՆ

ԱԶԳ-ԲԱՆԱԿԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀՅՌ
ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆՆԸ 3

ՀԻՄՆԱՔԱՐԵՐ

Տիգրան Ռ. Եփրեմյան
ԱԶԳԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՏԱԳԻԾԸ՝
ՎԵՍՏՖԱՅՈՒՄԱՆ ԽՏԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԻՅԻՅ
ՄԻՆՅԱՆ ԱՐԳԱՅՈՒՄԱՆ ԻՄՈՒՆՈՒՄՆԵՐԻ 9

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Վահան Ա. Տեր-Ղևոնդյան
ԵԳԻՊՏՈՍԻ ԱՅՅՈՒԲՅԱՆ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾՈՆԸ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ (1208–1216 թթ.) 33

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ալբերտ Ա. Սյրեփանյան
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱՎՈՐ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ
ԵՂԻՉԵԻ և ՄԻՎԱՆ ԽՈՐԵՆԱՍՏՈՒՄԻ
ՎԵՐԱՍՏԱՎՈՐՄԱՆ ՎՈՐՁ (անգլերեն) 45

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աշոտ Վ. Ոսկանյան
ԻՐ ՈՒՐԻՇԸ
Չարենց – Ստալին հարաբերության մասին 91

Հայկանուշ Ա. Շարություն
ԱՍՏՎԱԾԵՆՁՅԱՆ ԿԱՆԱՆՑ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ
ՀԱՄԱԾԵԽԱՐՀԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ
Ն. Մեյլեր, Ժ. Սարամազո, Է. Բերքես,
Ն. Կազանձակիս 104

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Աշոտ Ս. Աբրահամյան
ՏԵՔՍՏԻ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ ԵՎ ՌԱՍԵԼԻ
ՊԱՐԱԳՈՒՔՍԸ 117

ՓԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

Սեյրան Ա. Զարարյան
ՎԱՀՐԱՄ ՐԱԲՈՒՆՈՒ ՊԱՏՄԱՓԼԻՍՈՓԱՅԿԱՆ
ՈՒՒՄՆԵՐԻ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՅԵՐԵՐԸ 130

ՄՇԱԿՈՒՅԹ

Շուշանիկ Գ. Զոհրաբյան (Փարիզ)
ՐԱՖՖԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ
ԱՌԱՋՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 147

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Վահրամ Ռ. Միմոնյան
ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻՖՈՅԵԴՈՎԸ ԵՎ
ՊԱՐՄԿԱԿԱՅԵՐԻ 1828–1829 թթ. ՆԵՐԳԱՂԹԸ՝
ԱՂՐԵՉԱՆԱՌՈՒՄԱԿԱՆ ԱՅՏՈՒՄԱՅԵՐԻ
ՎԵՍՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՅՈՒՄ 153

Հասմիկ Մ. Եսայան
ՀԱՅԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ
ՖՐԵՋՆՈՅԻ ՇՐՋԱՆՈՒՄ
(1880–1920–ԱԿԱՆ ԹԹ.) 172

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Արարատ Մ. Հակոբյան
ՀՈՎԱՆՆԵՍ ՔԱՂԱՋՆՈՒՆՈՒ ՄԵԾ
ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ
ՄԱՍ ԱՌԱՅԻՆ: ՍՄԵՆՈՎԵՂՅԱԿԱՆ
ԽԱՐԽԱՎՈՒՄՆԵՐԻՅԻՅ ՄԻՆՅԱՆ ԱՌԱՅՈՒՄ
ԽԱՂԱՅՈՒՄՆԵՐԻ 182

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ

Լյուդվիգ Գ. Վարդանյան,
Խաչիկ Ա. Մակյան
ԳԻՏԱԳՈՒՄՆԵՐ «ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ»
ԵԶՐՈՒՅԹԻ ԾԱԳՄԱՆ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 210

ԼՐԱՏՈՒ

Թագուհի Ա. Ղազարյան
ՀԵՔԻԱԾՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁՆՈՂԸ
ՌՈՒՔԵՆ ՀՈՎԱՆՓՅԱՆԻ ԻՉԱՏԱԿԻՆ 230

ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գևորգ Ս. Խոնդինյան, ՆԻՒԹԵՐ Հ. Յ.
ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ, ԺԲ
ԽԱՌՈՐ, ԽԱՐԱԳԻՐ՝ ԵՐՈՒՄՈՒ ՓԱՆԱԿՈՒՄՆԵՐԸ 237

ԱՐԻՒՎ

ՄԱՐ-Ի ՆՈՐԱՀԱՅՏ ՀՈՒՇԵՐԸ
ՄԱՍ ՎԵՐԵՐՈՐԸ: ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝
ԳՐՎԱԾ 244
ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅՈՒՄ ՈՒ ՇԱՂԿԱԾՈՒՄ
ՊԱՌԱՍՏԵՂԻՆ՝ ՌՈՒՔԵՆ 1
Հ. ԳԱՍՎԱՐՅԱՆՆԸ և
ՌՈՒՔԵՆ Օ. ՍԱԽԱԿՅԱՆՆԸ

ՀԱՎԵԿԱԾ

Գեղամ Մ. Բաղդասարյան
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱՓՈՂՈՎՐԴԱ-
ԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ
ՆԱԽՈՐԵՆԻՆ
ՄԱՍ յՈՐԹԵՐՈՐԸ: ԲԻՅՈՒՄԻ ՆԱԽԱՆԳԻ
ԽԱՐԱՎ-ԱՐՆԵՂՅԱՆ ԳԱՎԱՌՆԵՐԸ 1 (261)

CONTENT 292

СОДЕРЖАНИЕ 293

«ԷԼՄ»-Ի 2016 Թ. ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ
ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆԿ 294

Հայկանուշ Ա. Շարուրյան
Բանաս. գիյր. թեկնածու

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԿԱՆԱՆՑ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ն. Մեյլեր, Ժ. Սարամագո, Է. Բերջես, Ն. Կազանձակիս*

Բանալի բառեր – Աստվածամայր, Մարիամ Մագդաղենացի, Սաղոմե, Հիսուս, նախատիպ, միջնադար, Ավետարան, Նորման Մեյլեր, Ժոզե Սարամագո, Էնթոնի Բերջես, Նիկոս Կազանձակիս, Կարլ Յունգ, գնոստիկ, կերպար, խորհրդանիշ:

Մուտք

Այսօր, երբ մարդկությունը բավականին հախուռն, ցնցող, հաճախ անկանխատեսելի իրադարձությունների ականատեսն է, Աստվածաշնչի նորովի մեկնաբանումը դառնում է պարզապես անհրաժեշտ, իսկ Փրկչի վաղուց քաջածանոթ կերպարը ձեռք է բերում նոր, հետաքրքիր ու խոր հոգեբանական, նույնիսկ հակասական իմաստ:

Ասվածի ապացույցն են Քրիստոսի կերպարի՝ համաշխարհային գրականության մեջ առկա ամենատարբեր մեկնաբանությունները, որոնք մեծ մասամբ խարսխվում են ապոկրիֆային կամ պարականոն Ավետարանի սկզբունքների վրա: Անշուշտ, Հիսուսի գրական դիմանկարն ամենևին էլ լիարժեք չէր լինի, եթե անտեսվեին նրա ձակատագրին աղերսվող, ավելին, նրա ձակատագրում էական դեր կատարող կանանց կերպարները:

Ներկա հոդվածի նպատակն է հիմնականում երեք հերոսուհիների՝ Տիրամոր, Մարիամ Մագդաղենացու և մասամբ Սաղոմեի զանազան կերպարավորումների զուգադիր քննությունը՝ մեր տեսանկյունից, ամենատիպական՝ ամերիկացի **Նորման Մեյլերի** (1923–2007) «Ավետարան ըստ Որդու» (1997), անգլիացի **Էնթոնի Բերջեսի** (1917–1993) «Մարդը Նազարեթից» (1979), պորտուգալացի **Ժոզե Սարամագոյի** (1922–2010) «Ավետարան ըստ Հիսուսի» (1997) և հույն **Նիկոս Կազանձակիսի** (1883–1957) «Հիսուսի վերջին գայթակղությունը» (1955) վեպերի հիման վրա: Խնդրո առարկայի լուսաբանման համար ուղենշային են եղել գրականագիտությո-

*Հոդվածն ընդունվել է տպագրության 28.10.2016:

յան մեջ ընդունված կանանց կերպարների դասական նախատիպերի բաժանումն ու վերջինիս վերաբերյալ հոգեվերլուծության հիմնադիր **Կարլ Յունգի** (1875–1961) առաջ քաշած տեսությունը¹:

Շվեյցարացի հոգեբույժ Կ. Յունգը **նախատիպերը** դիտարկում է իբրև տրամաբանական համակարգ: Քանի որ վերջիններս հանդես են գալիս որպես բնածին հոգեկերտվածք, ուստի և բացահայտում են գրական կերպարների հոգեբանության հավանական ենթաշերտերն ու ակնկալվող գործողությունները: Այս տեսության համաձայն՝ նախատիպերը կրում են սուկ ձևական բնույթ, բավական սահմանափակ են և ձեռք են բերում որոշակի բովանդակային արտահայտություն, դառնում իմաստալից միայն այն դեպքում, երբ ներթափանցում են անհատի գիտակցության մեջ ու միահյուսվում վերջինիս կենսական փորձառությանը: Ուշագրավ է, որ նախատիպերի գոյության փաստը Կ. Յունգը համեմատում է բյուրեղի առանցքի հետ, որն ինքնին սուկ մասնակցում է դրանց վերջնական ձևավորմանը, բայց առանձին վերցրած՝ կենսունակ չէ: Նախատիպերի հոգևոր սնուցման աղբյուրը անգիտակցականի խոր ըմբռնումն է, որը վեր է անհատի ենթագիտակցությունից, քանի որ զբաղված է աշխարհը բնութագրող տարրերի փնտրտուքով: Երևելի հոգեբանն ավելի հեռուն է գնում և մանրամասնելով սեփական տեսությունը՝ ընդգծում է բավականին ուշարժան մի դրույթ. նախատիպերի հանդեպ հակումը հատուկ է համայն մարդկությանը, քանի որ այն յուրաքանչյուրի ենթագիտակցության մեջ է և ինչ-որ առումով ունի ժառանգական բնույթ: Ուստի ելնելով նման մոտեցումից՝ կարելի է հավաստել, որ նախատիպերը բազմաթիվ են ու բազմաբնույթ: Կ. Յունգը, սակայն, առանձնացնում է հետևյալ հիմնական տեսակները՝ **սովեր** (կարծում ենք՝ ինչ-որ առումով Մարիամ Մագդաղենացին է, որն անընդհատ հետևում է Հիսուսին), **իմաստուն ծերունի, երեխա** (Սաղոմեի կերպարը է. Բերցեսի վեպում), **մայր** (Աստվածամայրը) և, իբրև հակադրություն վերջինիս, **օրիորդ** (նույն Սաղոմեն՝ որպես բուն աստվածաշնչյան կերպար, որն արտացոլված է Ն. Մելլերի վեպում): Թեև նախատիպերը, ինչպես նշվեց, ունեն ձևական բնույթ, այնուամենայնիվ աչքի են ընկնում զգացմունքային յուրօրինակ, հախումն դրսևորումներով և առինքնող են, քանի որ սկիզբ են առնում մարդկային հստակ բնույթներից:

Համաշխարհային գրականության մեջ ընդհանուր առմամբ տարբերակվում են կանանց դասական ութ նախատիպեր: Այսպես. գլխավորը **առաջնորդ կինն** է, որն ինքնավստահ է, շարժուն ու հավերժական մրցության մեջ է շրջապատող հասարակության հետ: Այդ կանայք միշտ իրադրության տերն են, շրջապատում միաժամանակ առաջացնում են թե՛ նախանձ, թե՛ հիացմունք և ուր էլ լինեն, մշտապես ուշադրության կենտրոնում են: Այսպիսին է Ժոզե Մարամագոյի կերտած Մարիամ Մագդաղենացին. վեպը սկզբից մինչև վերջ լի է այս կնոջ կերպարով, որը ոչ միայն ամենուր հետևում է Հիսուսին, այլև վերջինիս խորհրդատուն է ու միակը, որ կարող է անգամ ազդեցություն գործել նրա վրա:

Գայթակղիչ կինը խելացի է, ըմբռնող և հաստատական ու բնածին հմայքի շնորհիվ իշխում է իրեն շրջապատողներին, սակայն ցանկացած

1 Տե՛ս Юнг К. Г. Психологические типы. Москва, 2002.

փոխհարաբերություն ծառայեցնում է որոշակի նպատակի: Կանացի այս նախատիպը որոշ վերապահումներով, անշուշտ, նույնպես բնորոշ է ժողովրդի Մարամագոյի կերտած Մարիամ Մագդաղենացու կերպարին: Նա նվիրվում է Հիսուսին, որովհետև քաջ գիտակցում է վերջինիս յուրօրինակությունը և զգացմունքային տեսակետից իշխում է նրա վրա, քանի որ նման կանայք անկարող են այլ տարբերակով հարաբերություն ստեղծել: Ահա թե ինչպես է վիպասանը պատկերում Մարիամ Մագդաղենացուն. «Էակ, որն ապրում է սպասման շնորհիվ, Հիսուսի հոգու և մարմնի սպասման շնորհիվ, քանի որ Մարիամ Մագդաղենացին մեկն առանց մյուսի չի ընդունում»²:

Կրակոտ երեխա անվանում են այն կանանց, որոնք համարձակ են, աշխույժ, հաճախ՝ ցինիկ, սակայն անսահմանորեն կանացի: Նրանք դուր են գալիս բոլորին, բայց իրականում իրենց դժբախտ են զգում: Այսպիսի զարմանալիորեն «դիմակավորված» ու հակասական կերպար է Էնթոնի Բերջեսի կերտած Սաղոմեն. ենթարկվելով մոր դավերին՝ նա օգտագործում է իր կանացի հմայքն ու առինքնող պարից հետո Հերովդեսից որպես պարզև պահանջում Հովհաննես Մկրտչի գլուխը: Սաղոմեն, արդարև, ձեռք է բերում իր «պարզեր», սակայն խղճի խայթից տանջահար՝ վեպի ավարտին միանում է Հիսուսի հետևորդների ստվար խմբին: Ուշագրավ է, որ Նորման Մեյլերը ևս օգտագործել է Աստվածաշնչից քաջածանոթ այս դրվագը, սակայն ի տարբերություն վերոհիշյալ ավարտի՝ Սաղոմեի ձակատագրին բնավ չի անդրադառնում:

Մեկ այլ իմաստալից նախատիպ է կնոջ **«ազատ ոգի»** կոչվող տեսակը, որն ազնիվ է, անկեղծ, փխրուն, բայց օժտված է համախմբելու կարողությամբ: Այսպիսի կանայք անանձնական են, գործում են զգացմունքներից դրդված և կարող են անգամ հայտնվել անբարենպաստ իրավիճակներում: Այդպիսին է Նիկոս Կազանձակիսի կերտած Սաղոմեն, որը հարուստ հրեա Զելվեդերի կինն է: Նա առանց երկմտելու ընդունում է որդիների՝ Հիսուսին հետևելու փաստը և նույնիսկ առաջինն է, որը շրջապատի համար արտառոց ու տարօրինակ երիտասարդի մեջ նկատում է ապագա Փրկչին: Ուշագրավ է, որ հենց այս կինն է պաշտպանում հալածական Մարիամ Մագդաղենացուն, հորդորում Հիսուսի մայր Մարիամին տեսնելու և ընդունելու Որդու եզակիությունը: Կանացի այս նախատիպի վառ ապացույցն է Էնթոնի Բերջեսի կերտած Մագդաղենացին, որը պատրաստ է անգամ պայքարելու հանուն Հիսուսի քարոզած գաղափարների, ուստի և համախմբման կոչ է անում. «Անախորժություններ միշտ էլ կլինեն, իսկ ձջմարիտն այն է, որ Հիսուսին հետևող կանայք ժամանակն է, որ համախմբվեն՝ ի տես գալիք աղետների, ու վերածվեն բանակի: Հենց այդ գործին ենք նվիրվում մենք՝ այն մի քանիսս, որ հավաքվել ենք այստեղ, և մեր առաջին պարտքն այդ բանակի ընդլայնումն է: Գուցե դուք **անախորժություններ** ունենաք, բայց միթե մենք Նրա դուստրերը չենք, ով հայտնվել է, և չէ՞նք կրում մեր ներսում Նրա ոգին»³:

Թափառական կամ մոլորյալ կնոջ նախատիպը բնորոշ է թույլ սեռի

2 Сарамго Ж. Евангелие от Иисуса. Москва, 2007, с. 249.

3 Burgess A. Man of Nazareth, London, 1980, p. 198-199.

միամիտ, անապահով ու թախծոտ կերպարին, որը մեկուսացած է, անընդունակ է ինքնապաշտպանվելու, լռելյայն դիմանում է բոլոր դժվարություններին, ընթանում կյանքի հոսանքին համընթաց ու սպասում փրկության: Սակայն կանացի այս կերպարն ապշեցնում է ներքին տոկունությամբ և ուժով: Նա ընկեցիկ է, բայց ապականված աշխարհում պահպանում է իր հոգեկան անթերի աշխարհը: Այսպիսին է Մարիամ Մագդաղենացու կերպարը. վերոնշյալ բոլոր գրողների երկերում Մարիամը հասարակությունից հավածված է ու միայնակ, սակայն ժոզե Սարամագոյի կերտած Մագդաղենացին Հիսուսի հոգեկան միակ նեցուկն է: «Ես,- ասաց Մագդաղենացին,- նույնն եմ, ինչ քո սեփական բերանն ու ականջները: Այն, ինչ դու ինձ կասես, նույնն է, եթե դու ինքդ քեզ ասելիք ու լսելիք. ես սոսկ այն եմ, ինչը քո ներքում է»⁴: Մինչդեռ Նիկոս Կազանձակիսի պատկերած համանուն հերոսուհին տառապյալ կինն է, որին կյանքի հատակն է նետել Հիսուսի հանդեպ տածած կանացի սերը: Սակայն այդ նույն զգացմունքն էլ վերջինիս վերածում է հոգեպես հզոր էակի, որը տառապանքներից թրծված կնոջ իմաստությամբ նկատում է. «Մրանք յոթ մեղքերը չեն, Մարիամի Որդի, այլ յոթ վերքեր: Հիշիր՝ կինը վիրավոր եղնիկ է, և այդ թշվառականը, սեփական վերքերը լիզելուց բացի, այլ ուրախություն չունի»⁵: Եթե այս երկու վիպասանները Մարիամ Մագդաղենացուն ընկալում են որպես Հիսուսի հոգևոր անդորրն ապահովող խարիսխ, ապա Նորման Մելլերի կերտած հերոսուհին ինքն է հանձնի Հիսուսի գտնում իր հենարանն ու փրկությունը և վեպում բնավ հանդես չի գալիս իբրև առանցքային կերպար. արձակագիրը սոսկ պատկերում է Հիսուսի և Մարիամ Մագդաղենացու առաջին հանդիպումը, բայց վեպի ավարտին հայանցիկ դրվագով, երբ Փրկիչը դիմում է նրան ու պարզապես արտաբերում մեկ-երկու սփոփիչ խոսքեր, ընթերցողի համար ակնհայտ է դառնում, որ այս կինը երբևէ չի լքել Ուսուցչին:

Գրականության էջերում հաճախ հանդիպում է նաև **գրադարանավարուհու** նախատիպը, որը խելացի է, լրջմիտ, պայքարում է գաղափարական արժեքների հաղթանակի համար, սակայն համեստ արտաքինի ներքո քողարկում է զգացմունքային անբավ պաշարներ: Այս նախատիպն առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ հանուն իր սկզբունքների գիտակցաբար պատրաստ է սխրանքների: Այսպիսին է Նիկոս Կազանձակիսի կերտած Մաղոմեն, որը Մարիամ Մագդաղենացուն պաշտպանելու համար ընդունակ է դեմ կանգնել ամուսնուն, անգամ համարձակորեն ամոթանք տալ նրան՝ անպաշտպան կնոջը վերջինիս հետապնդողների առջև միայնակ թողնելու համար: Նա չի խորշում որևէ ճշմարտությունից և պատրաստ է ի լուր ամենքի հայտարարել ու պաշտպանել սեփական իրավացիությունն ու արդարամտությունը:

Կանանց նախատիպերի ընդունված դասակարգումն ամբողջականացնում է **հոգացող** կնոջ կերպարը, որն ինքնամոռաց նվիրվում է շրջապատողներին, իրեն երջանիկ է զգում միայն սեփական հարկի տակ, անսահման բարի է, ներողամիտ և շուրթերին մշտապես ունի խրախուսիչ խոսքեր: Այսպիսին է, անտարակույս, Մարիամ Աստվածամայրը, որը ժոզե

4 **Сарамаго Ж.** Евангелие от Иисуса. Москва, 2007, с. 252.
 5 **Казандзакис Н.** Последнее искушение Христа. Москва, 2012, с. 60.

Մարանագոյի «Ավետարան ըստ Հիսուսի» վեպում առանց գանգատվելու համակերպվում է իրեն բաժին ընկած ճակատագրին, նույնիսկ Որդու սրտում իր գրաված տեղը զիջում է Մարիամ Մագդաղենացուն՝ սոսկ թախանձելով նրան հոգ տանել Հիսուսի համար: Ահա թե ինչպես է գրողը պատկերում այս երկու կանանց հանդիպումը, կանայք, որոնցից յուրաքանչյուրը յուրովի սիրում է Փրկչին, ընկալում նրա եզակիությունն ու անսահմանորեն նվիրվում է վերջինիս. «Մարիամ Մագդաղենացին ընթանում էր նրա կողքով, և երբ նա հավասարվեց նազարեթցի Մարիամին, երկու կանայք՝ մեկը՝ առաքինի, մյուսը՝ անառակ, միանգամից հայացք ձգեցին միմյանց վրա, և նրանց հայացքում չկար ո՛չ թշնամանք, ո՛չ արհամարհանք, այլ սոսկ տարօրինակ երախտագիտություն, որ միմյանց հանդեպ կարող են տածել որևէ կարևոր ու գաղտնի գործում ներգրավված համախոհները, գործ, որի ըմբռնումն ու գնահատումը հասու է նրանց, միայն նրանց, ովքեր կարող են անցնել կանացի սրտի ոլորապտույտ լաբիրինթոսով»⁶:

Այսպիսով, կանացի նախատիպերի վերլուծությունից պարզ է դառնում, որ գրականության էջերում դժվար է վերջիններիս համար գտնել որևէ բացարձակ օրինակ, քանի որ նրանք միահյուսվում են, լրացնում մեկը մյուսին, և ընթերցողին ներկայանում է մի յուրօրինակ, առաջին հայացքից հակասական կանացի խառնվածք:

1. Աստվածածինն իբրև երկրային մայր

Մի կողմ թողնելով նախատիպերի քննությունը՝ առանձին դիտարկենք Հիսուսի մշտական ուղեկցուհիների՝ երկու Մարիամների՝ մոր և Մագդաղենացու կերպարները: Նրանց միավորում են Հիսուսի հանդեպ անանձնական սերը, հավատարմությունն ու նվիրվածությունը, և այդ ճանապարհին նրանցից յուրաքանչյուրը կատարում է իր յուրօրինակ զոհողությունը: Երկու Մարիամներն էլ իրենց այդ նվիրաբերումը կատարում են լուռ, հնազանդ, առանց որևէ նկրտումների, սակայն սեփական արժանապատվության բարձր գիտակցմամբ:

Քրիստոնեության հաստատման վաղ դարաշրջանում Աստվածամոր կերպարը շատ քիչ էր ուշադրության արժանանում, և միայն 5-րդ դարում է Անարատ Կույսի պաշտամունքը ձեռք բերում որոշակի հետաքրքրություն ու դառնում համընդհանուր ուսումնասիրության առարկա: Միջնադարյան գրականությունը Աստվածամորը պատկերում էր բացարձակապես որպես Փրկչի մայր և հավատացյալներին ու Աստծուն կապող օղակ: Եվրոպայում Աստվածամոր կերպարի հանդեպ հետաքրքրություն առաջացավ հատկապես 11-12 դարերի ընթացքում: Տիրամոր կերպարն այնուհետև մեծ դերակատարություն ունեցավ պարականոն գրվածքներում, մասնավորապես Հիսուսի Մանկության ավետարաններում (ասենք՝ Թովմայի Մանկությունը, Մարիամի ծնունդը, հայկական «Գիր Տղայության» ավետարանները և Ատաղծագործ Հովսեփի պատմությունը), որով և բացատրվում է գրողների երկերում վերջինիս ձեռք բերած բացարձակապես երկրային մոր կերպար-

⁶ Сармаго Ж. Евангелие от Иисуса. с. 281.

րը: Բանավոր ավանդույթներից, գրույցներից և ապոկրիֆային գրվածքներից են հայտնի դարձել նաև Մարիամի ծնողների՝ Հովակիմի ու Աննայի անունները, նրա՝ ուխտի զավակ լինելը, Տաճարին նվիրաբերումը, Հովսեփի՝ որպես նրա խնամակալի ընտրությունը, Ավետման մանրամասները, Սուրբ Ծնունդը և այլ պատմություններ: Աստվածամորն են վերագրված նաև «Մարիամի Ննջումն» ու «Մարիամի Տեսիլը» պարականոն գրությունները: Նրա ննջումը, ըստ ավանդության, եղել է Հիսուսի խաչելությունից 12 կամ 15 տարի անց, և Որդին, իր իսկ խոստման համաձայն, Մարիամին տեղափոխել է երկինք: Կույսի մարմինն ամփոփվել է Գեթսեմանիում՝ վիճակով գերեզմանի մեջ: Ըստ «Ննջումն Մարիամի» պարականոն գրվածքի, որի տարբեր խմբագրումները քրիստոնյա աշխարհում, այդ թվում՝ Հայաստանում, տարածում են գտել 9-12 դարերում, Երուսաղեմից բացակայող Բարդուղիմեոս առաքյալը, քարոզչական շրջագայությունից վերադառնալով և իմանալով Աստվածամոր ննջման մասին, առաքյալներին թախանձել է բացել Տիրամոր գերեզմանը՝ նրա երեսը վերջին անգամ տեսնելու համար: Բացելով գերեզմանը՝ այն, սակայն, թափուր են գտել և որպես մխիթարություն՝ նրան են տվել Հովհաննես Ավետարանչի ձեռքով նկարված Տիրամոր պատկերը (օտար ավանդություններում Բարդուղեմիոսի փոխարեն հանդես է գալիս Թովմա առաքյալը): Այս մասին պատմում է նաև Քերթողահայր Մովսես Խորենացին (մոտ 410-490) իր «Պատմութիւն Սրբուհոյն Աստուածածնի և պատկերի նորա» երկում, որը Խորենացուն հղված Վասպուրականի մեծ իշխան Սահակ Արծրունու նամակի պատասխանն է: Պատմահայրը մանրամասն անդրադառնում է Մարիամի ազգաբանությանը, մեկնաբանում կենսագրության առանձին դրվագներ, շարադրում նրա պատկերի պատմությունը, ներբողում Աստվածամորը: Ըստ այս գրվածքի՝ Բարդուղիմեոսը Տիրամոր պատկերը պատասպարել է Անձևացյաց երկրում Դարբնաց քար կոչված վայրում:

IV դ. առաջին կեսին Աստվածամոր մասին երկերը լայն տարածում ու կիրառություն են ստացել ամենուր, իսկ Անտիոքի աստվածաբանական դպրոցի ներկայացուցիչ, XI-XII դարերի ռուս տարեգիր, Կիևո-Պեչորյան վանքի վանական Նեստորի (ծննդյան և մահվան թվականներն անհայտ են) կողմնակիցները կիրառել են «Քրիստոսածին» անվանումը: Աստվածամորը նվիրված ձառեր, մեկնություններ, ներբողներ, տաղեր ունեն մատենագիր, մեկնիչ, թարգմանիչ Պետրոս Սյունեցին կամ Քերթողը (VII դ.), Սյունյաց եպիսկոպոս Թեոդորոս Քոթենավորը, որ հայտնի է նաև որպես Թեոդորոս Ճգնավոր (VII դ.), հայ մատենագիր, աստվածաբան, հանձարեղ Գրիգոր Նարեկացին (մոտ 951-1003), Կիլիկյան Հայաստանում ձանաչված մատենագիր, գիտնական, փիլիսոփա, պետական և եկեղեցական գործիչ, հրապարակախոս, բանաստեղծ, երաժիշտ և թարգմանիչ Ներսես Լամբրոնացին (աշխարհական անունը՝ Սմբատ, 1153-1198), հայ առաքելական եկեղեցու մեծ վարդապետ Գրիգոր Տաթևացին (1346-1409), տաղերգու, երաժիշտ, հասարակական-եկեղեցական գործիչ Առաքել Բաղիշեցին կամ Առաքել Պոռեցին (մոտ 1380-1454) և այլք: Սակայն եթե նրանց երկերում Աստվածամոր կերպարը խորհրդանշում էր սոսկ անարատությունն ու աստվածայինը, ապա 17-րդ դարից ի վեր գրականության ասպարեզում

տիրապետող է դառնում երկրային մոր կերպարը, որը ռուս բանասեր և արվեստագետ Դմիտրի Լիխաչովը բնորոշում է որպես «առօրյայի անհատականացում»⁷, այսինքն՝ երբ գրական կերպար է դառնում անհատը՝ իրեն բնորոշ կենցաղային, առօրյա հոգսերով և պարզ կենսակերպով: Այս առումով բացառություն չեն կազմում նաև աստվածաշնչյան կանայք, և Աստվածամայրը վերածվում է հասարակ մահկանացուի, սիրող ու հոգատար մոր:

Դիտելի է հատկապես Կ. Յունգի՝ մոր վերաբերյալ ներկայացրած սահմանումը: Մոր նախատիպը կարող է ունենալ բազում դրսևորումներ՝ ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ենթիմաստներով ու ձևակերպումներով: Կ. Յունգի տեսության համաձայն՝ մայրը «փրկության կրքոտ ձգտման մարմնացումն է, դրախտն ու Աստծո արքայությունը»⁸: Մոր խորհրդանիշն ամկա է անգամ ակնածանք ներշնչող առարկաներում (եկեղեցի, երկիր, հող, լուսին և այլն): Մոր նախատիպը կապված է նաև պտղաբերության ու առատության գաղափարի հետ և իբրև այդպիսին՝ կարող է առնչվել ժայռի, աղբյուրի, ծառի ու գարնան պատկերացումների հետ: Կ. Յունգի պնդմամբ՝ մոր խորհրդանիշը շրջանակ է, որը բառացիորեն նշանակում է ամենը, ինչը շրջապատում է կենտրոնը, ուստի այս համեմատությունը պայմանավորված է մոր պաշտպանական դերով: Ինչպես ցանկացած նախատիպ, մոր վերաբերյալ պատկերացումը ևս արտացոլում է երկակի ընկալում. մի կողմից՝ այն խորհրդանշում է հոգացողությունը, իմաստությունը, կարեկցանքը, հոգևոր բարձր արժեքները, բարությունն ու կնոջ մոգական ուժը, իսկ մյուս կողմից՝ այն ամենը, ինչը կապված է ամենակուլ գայթակղության հետ: Ուստի գիտնականը մատնանշում է մորը հատուկ երեք բնութագրիչ հատկանիշներ՝ «աստվածություն, կիրք և խավար»⁹:

Ասվածի ապացույցը կարելի է գտնել մեր խնդրո առարկա գրողների կերտած Աստվածամոր կերպարում, մասնավորապես վերջինիս՝ Որդու հետ ունեցած գրույցներում:

Այսպես. մեյլերյան Աստվածամայրը խորհրդանշում է հոգատարությունը, բարությունն ու աննկուն կամքը: Ահա թե ինչպես է Որդին բնութագրում մորը. «Քչերը կարող էին հակառակվել Մարիամի կամքին»¹⁰: Ապա ավելի շատ մանրամասնելու նպատակով հավելում է. «Ավելին, եթե Մարիամը համեստ էր, նա նաև փառասեր էր, և ես տանջվում էի երկուստեք, քանի որ նրա կամքը փորագրված էր քարի վրա»¹¹: Այս տողերով ազգությամբ հրեա արձակագիրը կերտում է տիպիկ հրեուհու, գուցեև սեփական մոր՝ Ֆաննիի կերպարը, որը նվիրված է ընտանիքին, անձնուրաց է, բայց և՛ իշխող ու համառ: Ուստի Որդին ամբողջականացնում է իրեն կյանք պարզևած կնոջ կերպարն ու ազդարարում. «Նա թագուհուն վայել սիրտ ուներ, բայց և թագուհու նման չէր հանդուրժում այն, ինչը չէր հասկանում»¹²: Իսկ Մարիամի անձնուրացության վկայագիրը խաչի վրա տառապող ու երկ-

7 Տե՛ս **Лихачев Д. С.** Развитие русской литературы X – XVII веков. Москва, 1998, с. 165.

8 Տե՛ս **Юнг К. Г.** Психологические типы. с. 304.

9 Տե՛ս նույն տեղում:

10 **Mailer N.** The Gospel According to the Son. New York, 1997, p. 25.

11 Նույն տեղում, էջ 59:

12 Նույն տեղում, էջ 60:

րային կյանքին հրաժեշտ տվող Որդու հետևյալ վերջին մտորումներն են. «Այժմ՝ չափազանց ուշ, ես ըմբռնեցի նրա սերը: Ես նրա համար Տիրոջ կողմից ուղարկված ընծա էի, ուստի ինձ համար վախենալով հանդերձ՝ նա համակերպվում էր այն ամենին, ինչը ես անում էի»¹³:

Ի տարբերություն մեյլերյան Աստվածամոր՝ Էնթոնի Բերջեսի համանուն հերոսուհին աստվածավախ կին է, հավատացյալ, բայց Որդու հետ փոխահարաբերության մեջ դրսևորում է սեփական գիտակցված արժանապատվություն և չի հանդուրժում որևէ առարկում. «Ինձ դուր չի գալիս քո խոսելու տոնը, որդիս: Կարծում եմ՝ տղան չպետք է այդպես խոսի սեփական մոր հետ: Կարծում եմ՝ կհամաձայնես, որ մայրությունը սոսկ կանանց է վերապահված, և մեր երկնային Հայրը դեմ չէ, որ այդ բախտը մեզ՝ կանացի մարմնով ստեղծվածներին, բաժին ընկնի: Դե, ինչ, շատ լավ: Ես չեմ հորդորում, որ որդիս իմ հանդեպ որևէ հատուկ հարգանք ցուցաբերի, սակայն հուսով եմ՝ որդիս բավականին խելամիտ է, որպեսզի հասկանա. ինձ հարգել նա, այնուամենայնիվ, պարտավոր է»¹⁴:

Ժողե Սարամագոն, սակայն, ընթերցողին է ներկայացնում հեզաբարո, ինչ-որ առումով անգամ անտեսված Մարիամի կերպարը, որը հանդուրժում է Որդու ցանկացած արարք, անգամ անիրավացի մեղադրանքներն ու պարզապես մրմնջում. «Ների՛ր, ես չէի ցանկանում քեզ վիրավորել, Աստված տա՛, որ երբեք չնթագնի ո՛չ աչքերիդ, ո՛չ էլ սրտիդ լույսը»¹⁵:

Ի հակադրություն վերոհիշյալ կերպարների՝ Նիկոս Կազանձակիսի կերտած Մարիամն իրեն համարում է դժբախտ մայր և բնավ չի համակերպվում Որդու բացառիկության հետ: Նա երագում է տղայի ընտանիքի մասին՝ պնդելով, որ միակ ճշմարիտ ուղին սեփական ընտանիք ստեղծելն ու զավակներ ունենալն է: Ավելին, նա Որդուն համարում է դատապարտված ի վերուստ և Զելվեդերի կնոջ՝ Սաղոմեի հետ գրույցի ժամանակ հայտարարում է. «Ծանր է մայրական վիշտը, տիկին Սաղոմե, Աստված ինձ միակ որդի պարգևեց, այն էլ՝ դատապարտված»¹⁶: Երբ Որդին ի լուր ամենքի հրաժարվում է սեփական մորից՝ հայտարարելով, թե Աստված է իր միակ սերը, հոգեկան սուր տվայտանքների պահին Մարիամն անգամ ցանկանում է նզովել սեփական զավակին (ի դեպ, համանման դրվագի պատկերումն առկա է նաև մյուս վիպասանների երկերում, բայց Հիսուսին անիծելու մղումը պատկերված է միայն հույն գրողի ստեղծագործության մեջ), սակայն բարեպաշտ Սաղոմեն կանխում է այս չգիտակցված հանցանքը: Ակնհայտ է, որ Նիկոս Կազանձակիսի այս հերոսուհին միակն է վերոհիշյալ վիպասանների կերտած համանուն հերոսուհիների շարքում, որ լիովին համապատասխանում է յունգյան սահմանմանը. նա աստվածային է, քանի որ աղավաղված փառաբանության ջերմորեն վերհիշում է իրեն պարուրած անասելի խոր զգացումները, մայրության բերկրությունն ու անգամ մտաբերում աստվածային պատգամն այն մասին, որ ինքն օրինված է, կրքոտ է, քանի որ ամբողջովին նվիրված է ընտանեկան հոգսերին,

13 Նույն տեղում, էջ 226:

14 Burgess A. Man of Nazareth, London. 1980, p. 71.

15 Сарамго Ж. Евангелие от Иисуса. 2007. Изд. «ЭКСМО», с. 244.

16 Казандзакис Н. Последнее искушение Христа, с. 112.

այդ շրջանակից դուրս որևէ կյանքի մասին անգամ չի էլ ցանկանում երագել ու ջերմեռանդորեն, բնավ չտրտնջալով խնամում է անդամալույծ ամուսնուն, իսկ խավար է, քանի որ որդու արարքներին վերաբերվում է գուտ մայրական կույր սիրով ու չի ընկալում աստվածայինը:

Այսպիսով, ինչպես նկատելի է, հիշատակված վիպասանների կերտած Աստվածամայրն օժտված է երկրային մորը բնորոշ բոլոր հատկություններով ուստի և առավել հոգեհարազատ է:

2. Մարիամ Մագդաղենացու ավանդական կերպարի նորովի լուսաբանումը

Ի սկզբանե Աստվածամոր կերպարը խորհրդանշում էր կնոջը վերագրվող ամենաէական հատկանիշը՝ հնագանդությունն ու ողջախոհությունը, ուստի այս բնութագրիչ գծերի սաստկացման և ընդգծման նպատակով ուսումնասիրողներն իրենց ուշադրությունը սևեռում են աստվածաշնչյան մյուս առանցքային կերպարին՝ Մարիամ Մագդաղենացուն, որը մարմնավորում էր ապաշխարող կնոջ վերաբերյալ պատկերացումները: Դեռևս 951-ին Գրիգորիոս Մեծ I պապը (մոտ 540-604), իր քարոզներից մեկի ժամանակ անդրադառնալով Դուկաս Ավետարանիչի վկայած Մարիամ Մագդաղենացու մասին պատմությանը, հայտարարել է, թե վերջինիս տանջող յոթ դևերը հավանաբար յոթ մահացու մեղքերն են. այս փաստը վկայում է միջնադարում կանանց մեղքերի ընդունված մոտեցման մասին: Մարիամ Մագդաղենացու կերպարի հանդեպ հետաքրքրությունը սկիզբ է առել 8-րդ դարում, սակայն լայն տարածում է գտել միայն 11-րդ դարում: Այս երևույթը պայմանավորված էր ապաշխարող կնոջ կերպարի կերտումով, որը հնարավորություն էր ընձեռում հանրությանը ներկայացնելու մեղքերի քավության գաղափարը: Մակայն գնոստիկ ավետարաններում նկատելիորեն փոխվում է Մարիամ Մագդաղենացու կերպարի հանդեպ ստեղծված կարծրատիպը, և երևան է գալիս ավետաբեր կնոջ պատկերը, քանի որ հենց նա է առաջինը տեսնում, ապա և ամենքին իրազեկում Հիսուսի հարության փաստը: Վերոհիշյալ ավետարանները, որոնցից մասնավորապես հայտնի է մոտավորապես 250-300-ին ստեղծված «Մարիամի Ավետարանը», հարված են հասցնում նաև միջնադարում կերտված հեզաբարո կնոջ կերպարին, քանի որ հիշյալ Ավետարանում պատմվում է Մարիամ Մագդաղենացու և Պետրոսի վիճաբանության մասին. Պետրոսը գանգատվում է Հիսուսին՝ նշելով, որ Մարիամն անընդհատ խոսում է, մինչդեռ պարտավոր է լռել, իսկ Քրիստոսը խրախուսում է Մագդաղենացուն ու քաջալերում նրան արտաբերելու սեփական տեսակետները: Այսպիսի հակասական կերպար է նաև այստեղ արդեն հիշատակված վիպասանների երկերում կերտված Մարիամ Մագդաղենացին:

Նորման Մեյլերն իր՝ Որդուն նվիրված վեպում հավատարիմ է մնացել Մարիամ Մագդաղենացու աստվածաշնչյան կերպարին և նրան պատկերել է որպես յոթ դևերով՝ յոթ մեղքերով լի կին, որը բնավ չի խորշում իր վարած կյանքից և նույնիսկ առանց վարանելու Հիսուսի երեսին նետում է.

«Եթե ինձ չես դատապարտում, ապա մի էլ դատիր: Առանց մարմնի կյանք չկա»¹⁷: Ավելին, Հիսուսի և Մարիամ Մագդաղենացու հանդիպման դրվագում վիպասանը շեշտադրում է Փրկչի բացառապես մարդկային կողմը, երբ վերջինս, քաջ գիտակցելով, որ կանացի գեղեցկությամբ հիանալու իրավունքն անգամ չունի, ինքն իրեն ականա խոստովանում է այս կնոջ նրբագեղության փաստը. «Իր մի կեսով նա նուրբ էր, ու այդ կեսն Աստծուն էր պատկանում»¹⁸: Եվ ամենևին չհամարանանելով Հիսուսի ու Մարիամ Մագդաղենացու որևէ փոխհարաբերություն՝ հեղինակը պատկերում է բազմանշանակ մի դրվագ. դեպի խաչելություն գնացող Հիսուսը չի մոռանում Մարիամ Մագդաղենացուն և նկատելով նրան՝ ասում է. «Հուսամ, երեխաներ ունեցիր, քանի որ Աստված ներել է քեզ»¹⁹:

Եթե Նորման Մելլերն ընթերցողին պարզապես հպանցիկ է ներկայացնում Փրկչի՝ Մարիամ Մագդաղենացու մեղքը ներելու փաստը, ապա Էնթոնի Բերջեսը Հիսուսին պատկերում է որպես Ուսուցիչ, որը ոչ միայն ներում է կնոջ մեղքը, այլև սիրո վերաբերյալ բավականին խոր ու դիպուկ խոհերով դարձի է բերում նրան. «Մարիամ Մագդաղենացին ցանկացավ մնալ նրանց հետ: Հիսուսը նրա հետ շատ մեղմ էր խոսում: ...Աստված ժպտում է, երբ սիրո գրկախառնություն է տեսնում, սակայն համեստորեն շրջում է հայացքը, քանի որ նույնիսկ նա չի կարող խանգարել սիրահարների անդորրը: Բայց մեր Երկնային Հայրը լալիս է, երբ այդ գրկախառնությունը հեզանքի է վերածվում: Իսկ հիմա դու էլ կարող ես լաց լինել»²⁰: Ավելին, այստեղ Մարիամ Մագդաղենացին Հիսուսի հարության ավետաբերն է. «Ինձ ծանոթ է այդ ձայնը: Լսե՛ք, թե նա ինչ ասաց. «Հիմանր, ինչու՞ ես դու ողջերին մեռյալների մեջ փնտրում»: Հիսուսը հարություն է առել»²¹:

Ժողե Սարամագոն, սակայն, ավելի շատ կարևորում է Մարիամ Մագդաղենացու դեպի Հիսուսը տածած սերն ու Աստվածամոր հանդեպ ցուցաբերած վերաբերմունքը: Ասվածի գեղարվեստական մարմնավորումը հստակ տեսանելի է Մարիամ Մագդաղենացուն բնութագրող հետևյալ հատվածում. «Մարիամ Մագդաղենացին ամբողջ աշխարհում կմնա մենակ. նա կցանկանա վերհիշել այս օրերն ու գիշերները, բայց ամեն անգամ ստիպված կլինի հուսահատ ձիգերով սեփական հիշողությունը պաշտպանել դառն ու տառապալից վերհուշներից, հարկադրված կլինի պաշտպանել սիրո կղզյակը շուրջը մոլեգնող արհավիրքների ծովից, ծովային խորխորատից վեր բարձրացող գեղուններից ու հրեշներից»²²: Այս հոգեկան տվյալտանքների հավաստիացումը հեղինակն ամրապնդում է նաև մեկ այլ, ոչ պակաս խոր դիտարկումով. «Մագդաղենացին չէր լալիս, և չարտասված արցունքները ներսից այրում էին նրան»²³: Իսկ Մարիամ Մագդաղենացու և Աստվածամոր փոխհարաբերությունը պատկերվում է վեպի առաջին իսկ

17 **Maier Norman.** The Gospel According to the Son, p. 180.

18 Նույն տեղում, էջ 181:

19 Նույն տեղում, էջ 227:

20 **Burgess A.** Man of Nazareth, p. 14.

21 Նույն տեղում, էջ 245:

22 **Сарамго Ж.** Евангелие от Иисуса, с. 333.

23 Նույն տեղում, էջ 361:

էջերում, երբ հեղինակն աներկբայորեն հայտարարում է Մագդաղենացու ակնածանքի մասին. անշուշտ, հետագա իրադարձությունների պատկերման ժամանակ ընթերցողը տեսնում է Հիսուսի կյանքում Մագդաղենացու կատարած առանցքային դերն ու անգամ տարակուսանքով ամրագրում Աստվածամոր՝ ինչ-որ առումով երկրորդային դերը սեփական որդու կյանքում: Սակայն վեպի առաջին էջերում պատկերված որմնանկարի վերլուծության ժամանակ ժողե Սարամագոն առանձնահատուկ շեշտադրությամբ ներկայացնում է երկու Մարիամներին՝ բերանքսիվայր ընկած Աստվածամորն ու վերջինիս ձեռքը համբուրել փորձող Մագդաղենացուն, ասել է թե՛ Հիսուսի հանդեպ անանձնական կանացի սերը Մագդաղենացին բնավ չի գերադասում աշխարհին Փրկիչ պարգևած մորից:

Մարիամ Մագդաղենացին գեղարվեստական ուրույն հանդերձանք է ստացել նաև Նիկոս Կազանձակիսի վեպում: Ուշագրավ է, որ նա այստեղ Հիսուսի հորեղբոր աղջիկն է, և նրանց երկուսին կապում է դեռևս մանկությունից եկող անարատ ու խոր սերը: Հենց այդ սերն էլ, որը Աստծո միջամտությամբ չի ավարտվում ամուսնությամբ և ստիպում է Մարիամ Մագդաղենացուն բռնել մեղսալից կյանքի ուղին, Հիսուսին մղում է անդարմանելի հոգեկան տվայտանքների՝ ստիպելով տանջվել թե՛ չիրականացած երազանքի և թե՛ աղջկա դժբախտ ճակատագրի ականա պատճառը լինելու համար: Սակայն նրբամիտ գրողը տալիս է այս ողբերգական պատմության ուրույն հանգուցալուծումը. Մարիամն ամեն գիշեր երազում տեսնում է Հիսուսին, որը ներս է մտնում իբրև լիիրավ տանտեր, հանգստանում ու պատմություններ պատմում: 'Իրանց իմաստը թեպետ կինն այդպես էլ չի ընկալում, բայց այդ կրկնվող երազները նրան ամենօրյա ավյուն են ներարկում ու պարզևում կանացի անասելի երջանկություն: Կինը, որ Հիսուսի հետ զրույցի ժամանակ բարկացած հայտարարում է, թե իր համար «մնացել է միայն մեկ ապաստան, մեկ մխիթարանք՝ ցեխը», իր համար «կա միայն մեկ սինագոգ, ուր կարող է աղոթել ու մաքրագործվել՝ ցեխը»²⁴, վեպի ավարտին երջանիկ է Հիսուսի քարոզներով ու նրան հետևող ամբոխին տեսնելով: Իսկ Հիսուսը, որն անգամ խաչի վրա իրեն այցելած տեսիլքի պահին իբրև իր կին տեսնում է Մարիամ Մագդաղենացուն, այս կնոջ հանդեպ իր վերաբերմունքն արտահայտում է հետևյալ պնդումով. «Գիշերուզօր ձեռքերս վեր կհատեն քեզ համար, Մագդաղենացի»²⁵:

Ամփոփելով նշենք, որ համաշխարհային համբավ վայելող չորս նշանավոր արձակագիրների՝ աստվածաշնչյան թեմաներով ստեղծած վեպերում կերտվել են կանացի երկու հակասական, սակայն միաժամանակ նաև միմյանց լրացնող կերպարներ. Կույս Մարիամն Աստվածամայր է, ասել է թե՛ մաքրության, անարատության խորհրդանիշ, բայց նա նաև մայր է՝ այդ բառի բոլորին հասկանալի, ընդգրկուն պարզ, բայց և բարդ իմաստով, որին տանջում է Որդու հետագա ճակատագրի հանդեպ տագնաապր: Նա՛ իբրև աստվածավախ և խորապես հավատացյալ կին, գիտակցում է իրեն բաժին ընկած բացառիկ դերը, բայց որպես զավակի համար

24 Казандзакис Н. Последнее искушение Христа, с. 59.

25 Նույն տեղում, էջ 86:

կյանքը նվիրաբերող մայր՝ ներքուստ երագում է սեփական որդու խաղաղ կյանքի մասին: Ակնհայտ է, որ խնդրո առարկա վիպասանները կերտել են Աստվածամոր բացառապես մարդկային կերպարը, հիմնականում չեն շեշտադրել նրա էության աստվածային հատկանիշները, այլ, ընդհակառակը, պատկերել են Որդու ձակատագրով ապրող հասարակ մոր կերպարը: Այսպես. Աստվածամոր հոգում պայքարում է երկատված մայրը. նա խորապես գիտակցում է զավակին բաժին ընկած արտառոց ձակատագրի բուն էությունը, Աստծո ընտրյալը լինելու բերկրանքը, բայց և զաղտնաբար երագում է Որդուն հասարակ մահկանացուի կյանք պարզելու մասին:

Ինչ վերաբերում է Մարիամ Մագդաղենացու կերպարին, ապա վիպասանները փորձում են մարդկային տեսանկյունից բացատրել Հիսուսին և Մագդաղենացուն կապող փոխհարաբերություններն ու այս կնոջը Փրկչի հետ կապող սերը: Ըստ հեղինակների՝ այս երկուսին կարող է այդպես անբակտելի միացնել միայն իսկական, անձնվեր սերը, որը կարող է տեղ գտնել տղամարդու և կնոջ միջև. չէ՞ որ Հիսուսը նաև մահկանացու է, ուստի և ընդունակ է գնահատել կանացի գեղեցկությունն ու երագել սեփական ընտանիքի մասին: Մարիամ Մագդաղենացին ևս տառապող կերպար է, քանի որ ստիպված է իր կանացի պարզ զգացմունքը զոհել հանուն իր ընտրյալի վեհ առաքելության:

Ակնառու է, որ ամերիկացի, պորտուգալացի, անգլիացի և հույն վիպասանների երկերի համար հիմք են ծառայել պարականոն Ավետարաններում հանդիպող պատմությունները, ինչը և պայմանավորել է կերպարների բացառապես մարդկային նկարագիրը: Ինչպես պարզորոշ երևում է, Աստվածամայրը Փրկչին լույս աշխարհի բերողն է, ասել է թե՛ մարդկության փրկության հիմնադրողը, իսկ Մարիամ Մագդաղենացին՝ Փրկչի հարության ազդարարողը, ուստի և մոտալուտ փրկության հավաստողը, իսկ նրանց սերը՝ Որդուն կորով ներշնչող խարիսխը:

Հայկանուշ Ա. Շարուրյան – Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է համաշխարհային, մասնավորապես անգլոամերիկյան գրականությունը («Նորման Մեյլեր. Սպիտակ նեգրը», մենագրություն, Եր., 2007, Ջեյմս Ջոյս, Երիտասարդ արվեստագետի դիմանկարը պատանության հասակում, Եր., 2006, Լաո Մա, Մի յուրահատուկ անձնավորություն. համառոտ պատմվածքներ, Եր., 2015 և այլն), ինչպես նաև անգլերենին վերաբերող լեզվաբանական զանազան աշխատություններ: h.sharuryan@ysu.am

Summary

CHARACTERS OF BIBLICAL WOMEN IN WORLD LITERATURE

N. Mailer, J. Saramago, A. Burgess, N. Kazantzakis

Haykanush A. Sharuryan

Key words – Virgin, Mary Magdalene, Salome, Jesus, prototype, medieval, Bible, Norman Mailer, José Saramago, Anthony Burgess, Nikos Kazantzakis, Carl Jung, gnostic, character, symbol.

The presented article is devoted to the comparative study of novels by world-known four authors – American novelist Norman Mailer, English writer Anthony Burgess, Portuguese author José Saramago and Greek writer Nikos Kazantzakis: all novels have biblical themes (“The Gospel According to the Son”, “Man of Nazareth”, “The Gospel According to Jesus”, “The Last Temptation of Jesus”). Here are mainly presented unique literary personification and deeply humane nature of three heroines – Virgin, Mary Magdalene and partially Salome.

Резюме

БИБЛЕЙСКИЕ ЖЕНСКИЕ ОБРАЗЫ В МИРОВОЙ ЛИТЕРАТУРЕ

Н. Мейлер, Ж. Сарамаго, Э. Берджес, Н. Казандзакис

Айкануш А. Шарурян

Ключевые слова – Богоматерь, Мария Магдалена, Саломе, Иисус, прототип, средневековье, Евангелие, Норман Мейлер, Жозе Сарамаго, Энтони Берджес, Никос Казандзакис, Карл Юнг, гностический, образ, символ.

Статья посвящена сопоставительному анализу романов на библейские темы «Евангелие от Сына», «Человек из Назарета», «Евангелие от Иисуса», «Последнее искушение Христа» четырех всемирно известных авторов – американского писателя Нормана Мейлера, английского писателя Энтони Берджеса, португальского писателя Жозе Сарамаго и греческого писателя Никоса Казандзакиса. Представлены в основном своеобразие художественных образов и глубоко человеческая природа трех героинь: Богоматери, Марии Магдалены и частично – Саломе.